



Հարկային նորություններ

Ուժի մեջ է 2018թ.
Եղի՛ր տեղեկացված

Armenian Tax update

Enforced 2018
Be in the know

Հարկային օրենսգրքի ընդունում
Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք
ՀՕ-165-Ն

Ընդունվել է 04.10.2016թ.

Ուժի մեջ է՝ 01.01.2018թ.

Հարկային օրենսգրքով միասնականացվել է ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականությունը: Սահմանվել են տրանսֆերային գնազոյացման մեխանիզմները:

Adoption of the Tax Code of the Republic of Armenia

AL-165-N

Adopted 04.10.2016

Enforced 01.01.2018

Armenian tax policy was harmonized within Tax Code. Transfer pricing mechanisms were determined.

**Երկրորդային հումքի ցանկի վերաբերյալ
«Երկրորդային հումքի ցանկը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ N136-Ն**

Ընդունվել է 16.02.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է երկրորդային հումքի ցանկը, որոնց առևտրային գործունեությունից ստացվող եկամուտները Հարկային օրենսգրքի համաձայն 01.01.2018թ. հունվարի 1-ից հարկվելու են շրջանառության հարկով:

RA Government Decision "On Defining the List of Secondary Raw Materials" N136-N

Adopted 16.02.2017

Enforced 01.01.2018

The list of secondary raw materials has been determined, and according to the Tax Code starting from January 1, 2018 income from commercial activities of these materials will be taxed by turnover tax.

**Եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկի լրացման կարգը՝
աշխատողի վերաբերյալ սահմանափակ օգտագործման ենթակա
տեղեկատվություն սահմանված լինելու դեպքերում**

**«Նոր աշխատողի համար օրենսդրությամբ սահմանափակ օգտագործման
ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում գրանցման
հայտի, եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկը
ներկայացնելու կարգի վերաբերյալ» ՀՀ ԿՈ N223-Ն**

Ընդունվել է 09.03.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Հարկային գործակալները գրանցման հայտեր չեն ներկայացնում այն անձանց համար, որոնց վերաբերող գրանցման հայտում ներառվող տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ համարվում է սահմանափակ օգտագործման: Հարկային գործակալը նշված անձանց եկամուտները և պահված եկամտային հարկը եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում արտացոլում է հաշվարկի համապատասխան տողում հանրագումարային տեսքով:

**RA Government Decision on "The Procedure of Submitting Application for
Registration, Monthly Return on Personal Income Tax and Social Payment in
Case when Information on New Employee has been Defined as Limited Use of
Information per Legislation" N223-N**

Adopted 09.03.2017

Enforced 01.01.2018

Tax agents are not required to submit applications for registration for those employees for whom information contained in application for registration is considered to be limited use of information according to the Armenian legislation. Tax agent reflects income and tax withheld for these noted persons in the return of personal income tax and social payment in the corresponding line of the return in aggregate form.

**«Քնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու
գործառնությունների շրջանակներում ձևավորվող հարկման բազաների ու**

**ակտիվների սկզբնական արժեքների որոշման կարգը սահմանելու մասին»
ՀՀ ԿՈ N241-Ն**

Ընդունվել է 09.03.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Բնամթերային ձևով եկամուտները կարող են լինել գույքի, աշխատանքի, ծառայության, մտավոր սեփականության արդյունքի տեսքով: Սահմանվել է բնամթերային ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ձևավորվող հարկման բազաների ու ակտիվների սկզբնական արժեքների որոշման կարգը:

RA Government Decision on “The Procedure of Determining the Tax Base and Initial Asset Values Established within In-Kind (Non-Monetary) Transactions and Operations” N241-N

Adopted 09.03.2017

Enforced 01.01.2018

In-kind (non-monetary) income can be in the form of property, work, service, intellectual property product. So a procedure was established to determine the tax base and initial asset values of non-monetary transactions.

**ԱԱՀ վերադարձի հարկային հաշվում ներառվող տվյալների վերաբերյալ
«ԱԱՀ վերադարձի հարկային հաշվում պարտադիր ներառվող տվյալների
շրջանակը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ N254-Ն**

Ընդունվել է 16.03.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է Հարկային օրենսգրքով սահմանված ԱԱՀ վերադարձի հարկային հաշվում պարտադիր ներառվող տվյալները, մասնավորապես, հաշվարկային փաստաթղթի սերիան, համարը, դուրսգրման ամսաթիվը, ապրանքի անվանացանկը և այլն:

Government decision on “Defining the Scope of Data Required to be Included in VAT Refund Tax Invoice” N254-N

Adopted 16.03.2017

Enforced 01.01.2018

The data which is required to be included in VAT refund tax invoice has been determined according to tax code, particularly series of invoice, date of issuance, commodity list, etc.

**Խտանյութի ցանկի վերաբերյալ
ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններ ՀՕ-79-Ն**

Ընդունվել է 01.03.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Հստակեցվել է ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս խտանյութի առանձին տեսակների ցանկը:

**On the List of Concentrates
Changes in the Tax Code AL-79-N**

Adopted 01.03.2017

Enforced 01.01.2018

For the purposes of royalty calculation, the list of specified types of concentrate was clarified in determining sales turnover.

Տոտալիզատորի համակարգիչների հաշվառման վերաբերյալ «Տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնում հաշվառելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ N296-Ն

Ընդունվել է 23.03.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնում հաշվառելու կարգը:

On the Registration of Totalisator Computers

RA Government Decision "On Defining the Procedure for Registering the Computers with Tax Authorities Specified for Organising Internet Totalisators Directly in Casino"

N-296-N

Adopted 01.03.2017

Enforced 01.01.2018

A procedure has been determined for registration with tax authorities of computers, which are used for betting, organizing internet betting directly (in Casino).

Եկամտային հարկի հարկման բազայի վերահաշվարկման վերաբերյալ «Եկամտային հարկով հարկման բազայի վերահաշվարկման դեպքերը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ N414-Ն

Ընդունվել է 23.03.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել են եկամտային հարկի հարկման բազայի վերահաշվարկման հիմքերը: Մասնավորապես, վերահաշվարկման հիմք կհանդիսանան աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում չաշխատած օրերի համար վճարված արձակուրդային գումարները, մայրության նպաստի ավել վճարված գումարները:

Government Decision on "Defining Recalculation Cases of the Tax Base of Personal Income Tax" N414-N

Adopted 01.03.2017

Enforced 01.01.2018

The grounds for recalculating of tax base of PIT have been determined. Particularly, the basis for recalculation will be the vacation money paid for days not worked in case of termination of employment contract.

Նոտարների, ֆիզիկական անձանց և մի շարք այլ կազմակերպությունների հարկային մարմնում հաշվառման վերաբերյալ

«Նոտարների, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուլպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային

կազմակերպությունների ու մշտական հաստատությունների՝ հարկային մարմնում հաշվառման կանգնելու կարգը սահմանելու մասին»

ՀՀ ԿՈ N430-Ն

Ընդունվել է 27.04.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է նոտարների, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների ու մշտական հաստատությունների՝ հարկային մարմնում հաշվառման էլեկտրոնային կամ թղթային եղանակով հաշվառման կանգնելու կարգը:

Government Decision on “The Procedure of Registration of Notaries, Individuals, Diplomatic Representations, Consulates Accredited in Armenia, their Equivalent International Organizations and Permanent Establishments with Tax Authorities” N430-N

Adopted 27.04.2017

Enforced 01.01.2018

The procedure was established to register notaries, individuals, diplomatic representations, consulates accredited in Armenia, their equivalent international organizations and permanent establishments in electronic or paper form with tax authorities.

Կոնցեսիոն պայմանագրերի վերաբերյալ

«Շնորհատուհի կողմից օպերատորին հանրային ծառայությունների մատուցման ենթակառուցվածքներ տրամադրելու համաձայնությունները (պայմանագրերը) հարկման նպատակով որպես կոնցեսիոն պայմանագիր որակելու չափանիշներն ու ընթացակարգը» ՀՀ ԿՈ N479-Ն

Ընդունվել է 11.05.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է հանրային ծառայությունների մատուցման ենթակառուցվածքներ տրամադրելու վերաբերյալ համաձայնագրերը (պայմանագրերը) որպես կոնցեսիոն համաձայնություններ դասակարգելու հիմնական չափանիշները. Մասնավորապես, օպերատորի ստանձնած հիմնական պարտականությունը հանրային ծառայության բնույթ է կրում, շնորհատուն կամ անկախ կարգավորող մարմինը վերահսկում և (կամ) կարգավորում է օպերատորի կողմից տվյալ ենթակառուցվածքի միջոցով մատուցվող հանրային ծառայությունները, հանրային ծառայություններ ստացողների շրջանակը, հանրային ծառայությունների սակագները, ինչպես նաև շնորհատուն սեփականության իրավունքով կամ այլ կերպ վերահսկում է ենթակառուցվածքի գծով ցանկացած նշանակալի մնացորդային շահ՝ համաձայնության ժամկետի ավարտին: Մնացորդային շահն ակտիվի ծառայության ժամկետի ավարտին ակտիվից տնտեսական օգուտներ ստանալու ակնկալիքն է:

RA Government Decree on “The Criteria and Procedure for Qualifying the Consent (Agreement) of the Grantor to the Operator to Allocate Infrastructures for Providing Public Services as a Concession Agreement for the Taxation Purposes” N479-N

Adopted 11.05.2017

Enforced 01.01.2018

The main criteria for classifying consents (agreements) to allocating infrastructures for providing public services as concession agreements have been determined. Particularly, the main responsibility of the operator is of public service nature, the grantor or independent regulating body controls and (or) regulates the public services provided by the operator via the given infrastructures, the frames of public service recipients, the tariffs of public services, as well as the grantor based on his property rights or otherwise controls any remaining (balance) interest on the infrastructure at the end of the agreement term. The remaining (balance) interest is the expectation to gain economic benefit from the asset at the end of the assets service term.

«Օֆշորային գոտիների (երկրների) ցանկը հաստատելու մասին» ՀՀ ԿՈ N595-Ն

Ընդունվել է 01.06.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է օֆշորային գոտիների ցանկը:

RA Government Decision "On Approving the List of Offshore Zones (Countries)" N595-N

Adopted 01.06.2017

Enforced 01.01.2018

The list of offshore zones has been established.

Տեղեկագրում ներկայացված ինֆորմացիայի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք կապվել հայաստանյան Դելոյթ ընկերության մեր մասնագետների հետ.

If you have any questions regarding the information provided in this newsletter, please contact one of the professionals at our Deloitte office in Armenia:

Արփիկե Ղևոնդյան
Arpine Ghevondyan

Արուս Ոսկանյան
Arus Voskanyan

Տնօրեն
Director

Հարկային բաժնի ավագ խորհրդատու
Senior assistant of tax department

aghevondyan@deloitte.am

հեռ.+374 (10) 52 65 20 (և. 6060)

avoskanyan@deloitte.am

հեռ.+374 (10) 52 65 20 (և. 6021)

Call +374 (10) 52 65 20 (ext. 6060)

Call +374 (10) 52 65 20 (ext. 6021)



Deloitte refers to one or more of Deloitte Touche Tohmatsu Limited, a UK private company limited by guarantee (“DTTL”), its network of member firms, and their related entities. DTTL and each of its member firms are legally separate and independent entities. DTTL (also referred to as “Deloitte Global”) does not provide services to clients. Please see www.deloitte.com/about for a more detailed description of DTTL and its member firms.

Deloitte provides audit, consulting, financial advisory, risk management, tax and related services to public and private clients spanning multiple industries. Deloitte serves four out of five Fortune Global 500® companies through a globally connected network of member firms in more than 150 countries bringing world-class capabilities, insights, and high-quality service to address clients’ most complex business challenges. To learn more about how Deloitte’s approximately 244,000 professionals make an impact that matters, please connect with us on [Facebook](#), [LinkedIn](#), or [Twitter](#).

This communication contains general information only, and none of Deloitte Touche Tohmatsu Limited, its member firms, or their related entities (collectively, the “Deloitte Network”) is, by means of this communication, rendering professional advice or services. Before making any decision or taking any action that may affect your finances or your business, you should consult a qualified professional adviser. No entity in the Deloitte Network shall be responsible for any loss whatsoever sustained by any person who relies on this communication.

© 2017 Deloitte Armenia CJSC. All rights reserved.